ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«27» «սեպտեմբերի» 2023 թ. № 341-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 125-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 81-Ն որոշման 6-րդ կետը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 28-ի «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը հաստատելու մասին» N 125-Լ հրամանի հավելված N 1-ի 4-րդ գլխից հետո լրացնել նոր 4.1 գլուխ հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԸ

32.1 Օրհուս կենտրոնը «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայով սահմանված (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) նպատակներին հասնելու համար էկոլոգիական տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության, շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող տեղեկատվության հավաքագրման, մշակման, ակտիվ տարածման միջոցով նպաստում է առողջ և բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքի իրացմանը:

32.2 Օրհուս կենտրոնը կարող է ունենալ մարզային կենտրոններ:

32.3 Օրհուս կենտրոնն իր աշխատանքները կազմակերպում է իր կանոնակարգի հիման վրա, որը հաստատում է խորհուրդը:

32.4 Օրհուս կենտրոնի աշխատանքները համակարգում է խորհուրդը, որը ստեղծվում է շրջակա միջավայրի նախարարի կողմից:

32.5 Խորհուրդը՝

1) ընտրում է նախագահ՝ խորհրդի հերթական նիստերը վարելու և նիստերի միջև ընկած ժամանակահատվածում՝ խորհրդի նիստերից բխող հանձնարարականների կատարմանը հետևելու համար.

2) հաստատում է իր աշխատակարգը,

3) եզրակացություն է տրամադրում Օրհուս կենտրոնի աշխատակիցների թեկնածուների ընտրության վերաբերյալ,

4) հաստատում է կենտրոնի գործունեության տարեկան աշխատանքային պլանը, լսում է կենտրոնի գործունեության մասին հաշվետվությունները և տալիս առաջարկություններ,

5) եզրակացություն է տրամադրում Օրհուս կենտրոնի կանոնակարգի վերաբերյալ:»

2. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

9/27/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«27»---------2023թ.
սեպտեմբեր
ք. Երևան

Կազմված է «29» սեպտեմբեր 2023 թ.
Բաղկացած է 2 էջից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
շրջակա միջավայրի նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 27-ի
N 341-Լ հրամանի համաձայն
Հ.Սիմիդյան

_____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«27» սեպտեմբերի 2023 թ.

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի
կողմից 05.08.2020թ.
գրանցման համար՝ 222.210.1125308
ՀՎՀՀ՝ 02825793
13.06.2023թ. գրանցված կանոնադրության
թիվ ____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից

10 10 2023 թ.

«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

Ք. ԵՐԵՎԱՆ
2023թ.

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 4-րդ գլխից հետո լրացնել նոր 4.1 գլուխ հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԸ

32.1 Օրհուս կենտրոնը «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայով սահմանված (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) նպատակներին հասնելու համար էկոլոգիական տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության, շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող տեղեկատվության հավաքագրման, մշակման, ակտիվ տարածման միջոցով նպաստում է առողջ և բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքի իրացմանը:

32.2 Օրհուս կենտրոնը կարող է ունենալ մարզային կենտրոններ:

32.3 Օրհուս կենտրոնն իր աշխատանքները կազմակերպում է իր կանոնակարգի հիման վրա, որը հաստատում է խորհուրդը:

32.4 Օրհուս կենտրոնի աշխատանքները համակարգում է խորհուրդը, որը ստեղծվում է շրջակա միջավայրի նախարարի կողմից:

32.5 Խորհուրդը՝

1) ընտրում է նախագահ՝ խորհրդի հերթական նիստերը վարելու և նիստերի միջև ընկած ժամանակահատվածում՝ խորհրդի նիստերից բխող հանձնարարականների կատարմանը հետևելու համար.

2) հաստատում է իր աշխատակարգը,

3) եզրակացություն է տրամադրում Օրհուս կենտրոնի աշխատակիցների թեկնածուների ընտրության վերաբերյալ,

4) հաստատում է կենտրոնի գործունեության տարեկան աշխատանքային պլանը, լսում է կենտրոնի գործունեության մասին հաշվետվությունները և տալիս առաջարկություններ,

5) եզրակացություն է տրամադրում Օրհուս կենտրոնի կանոնակարգի վերաբերյալ:»

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականի մայիսի 8-ին գրանված կանոնադրության (փոփոխությունը գրանցված է 2023 թվականի հունիսի 13-ին) բաղկացուցիչ մասը: